ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«24» «օգոստոս» 2026 թվական № 533-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 21-ի N 42/45.45/28877 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հրամանով հաստատված 336-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության մասնագետի (ծածկագիր՝ 15-32.3-Մ6-2) պաշտոնի անձնագրի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության ավագ մասնագետներից մեկը կամ Վարչության մյուս մասնագետը:»:

1) Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր ենթակետով.

«457) Շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության մասնագետի պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-32.3-Մ6-3)՝ համաձայն 457 հավելվածի:»:

2) Ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 433-րդ ենթակետը և հրամանի 433-րդ հավելվածը:

8/24/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան